

գիրքով, որպէս աղօթող՝ ծունկ չոքած Յիսուսի առաջ, որ նստած է դահույքի վերայ Ciborium-ի տակ: Լուսանցքի զարդերը շատ գեղեցիկ են, քնքոյշ, ակնապարար եւ հանգուցիչ՝ ուշադրութեան արժանի յատկապէս, սկզբնաւորութեան Ձ մանրանկարչական տարր: Բայց բարդ չեն դոյները եւ ոչ էլ անդալի նիւաններով խաղեր ունի, ինչպէս կելիկեան շրջանի ԺԳ. դարի ձեռագիրները, բայց որոշ չափով նկատելի արդէն բիւզանդական ազդեցութիւն: Ստացողն է Ներսէս Լամբրոնացին պատանի հասակում, հաւանօրէն, երբ ուսանում էր դեռ եւս Հռոմկլայում. «Չաճամերձ քահանայ Ներսէս/ զորդի մեծազաւր Սեւաստաւսի Աւշինի յիշեսջիք ի քս., որդիք լուսոյ», ասում է յիշատակարանը (174բ.):

Ներսէս Ծնորհալուց յետոյ Հռոմկլայն շարունակում է մնալ որպէս աթոռանիստ հայրապետութեան մինչեւ Կոստանդին, բայց նաեւ որպէս գրչութեան կեդրոն: Գրիգոր Աւիրատի օրինակից Յակոբ գրիչ 1202 թուին գրում է Ծնորհալու Կաթողիկէայց թղթերի մեկնութիւնը Ստեփանոս Տիրացու եպիսկոպոսի համար: * ՁՁ-եր են գրուած եւ Յովհաննէս Մեծարարոյ-ի օրով: Այս փոքրիկ տեսութեամբ հասկանալի պիտի լինի գրչութեան արուեստի այն բարձր աստիճանը, որ տեսնում ենք Կոստանդին Կաթողիկոսի ժամանակ Հռոմկլայում:

* * *

Կոստանդին Կաթողիկոսի անուան հետ կապուած մեզ յայտնի առաջին ձեռագիրը մի «գեղեցիկազարդ» աւետարան է, Վենետիկի No. 69, որ ըստ Ալիշանի նուիրել է նա Անդրէասեանց ուխտին իւր ինքնաձեռագիր յիշատակագրութեամբ. «ղաւետարանս մեր զոր գրել ենք ծախիւք եւ ծաղկերանք զարդարել ոսկով եւ երփներփն գունիւք: եւ կազմեալ ոսկով եւ արծաթով: Տուաք ի սբ. ուխտս Անդրիասեանց եւ յառաքելաչնորճ եպիսկոպոսն տր. Պաւղոս կամաւ եղբաւորդոյն մերոյ Թորոսի քահանայի: յիշատակ մեզ եւ ծնողաց մերոց»: Փոխարէն ստանում է հինգ պատարագ, մէկը հօրը Վահրամին, երկրորդը Ծուշիկ մօրը, երրորդը եղբօրը՝ Գէորգ քահանային, որ վերեւ յիշուած Թորոս քահանայի հայրն է, չորրորդը միւս եղբօրը՝ Գրիգորին եւ հինգերորդը սորա Գրիգոր որ-

դուն: «Այս եղեւ ի թվ. ՁԺԲ (=1264)»: * Բայց աւետարանը գրուած է 1244 թուին, Կիրակոս քահանայի ձեռքով Հռոմկլայում, որի գեղարուեստական դնահատականը տալիս է Օր. Սիրարփի Տէր Ներսէսեան իւր Հայ արուեստի պատմութեան համար արժէքաւոր աշխատանքի մէջ: **

Երկու տարի յետոյ՝ 1246 թուին՝ Կոստանդին Կաթողիկոսը թարգմանել է տալիս Միքայէլ Ասորու ժամանակագրութիւնը, ինչպէս տեսանք վերեւ, որին եւ կցուած էր կաթողիկոսի կենսագրականը: †

Երկրորդ ձեռագիրը Բարձրբերդի աւետարանն է, որ պահուած է Անթիլիասի Կաթողիկոսարանում: Հանգուցեալ Տ. Սահակ Բ. Կաթողիկոս իւր ձեռքով արտագրել էր յիշատակարանը եւ ուղարկել մեզ Էջմիածին արծաթապատ ոսկէջրած կազմի լուսանկարների հետ. բայց 1935 թուին էլ անձամբ տեսնելու եւ ուսումնասիրելու բաղձն ունեցանք: Սոյն աւետարանի նկարագրութիւնը տուել է Տ. Արտաւազդ Արքեպիսկոպոս յիշատակարանների եւ կազմի անյաջող լուսանկարի հետ: ‡ Աւետարանը գրուած է 1248 թուին, իսկ կազմը շինուած վեց տարի յետոյ:

Առաջին երեսը խաչելութիւնն է, Յիսուսի աջից Մարիամի անդրին՝ «մայր այ» գրած, ձախից Յովհաննէսի անդրին՝ վերան «Յովհաննէս» գրուած. Յովհաննէս ձեռքը ծնոտին՝ սովորականի նման: Պաչի գլխին մի հրեշտակի անդրի՝ խաչազուլու դաւադան եւ գունդ բռնած ձեռքին: Նման հրեշտակ եւ ներքեւը: Պաչի հորիզոնական թեւերից վեր՝ արեգակ եւ լուսին: Չորս անկիւններում կանգնած են չորս աւետարանիչները, որ խաչակնքում են, կողքերին իրենց թեւաւոր նշանակները, Ղուկաս եւ Մարկոս վերեւ, Մատթէոս ու Յովհաննէս ներքեւ: Ապա աջից (Յիսուսի) «Բարթողիմէոս, Անդրիաս,

* Սխուան 150:
 ** Manuscrits Armeniens Illustrés. 1936, Paris. Տես եւ Մեսրոպ Եպս. Ազգար. Հանդէս XXIV. եր. 64:
 † Արտաւազդ Արքեպս. Կիլիկեան գրչագրեր Երուսաղէմի մէջ. «Հայաստ. Եկեղեցի», 1942, եր. 347:
 ‡ Մայր Յուցակ Հայերէն Ձեռագրաց Հայկալի եւ Անթիլիասի եւ մասնաւորաց. Հալկպ. 1936. եր. 1:

* Ալիշան. Հայապատում. 443: